ՅՈՒԲԵԼԵԱՆՆԵՐ

ՆՈՐԻՑ ՄԻ ՊԱՅԾԱՌ ՋՕՐԱՒՈՐ ԳՐԻՉ

ՍԱՄԱՐՈՒՀԻՆ

Գեղեցիկ, կատարեալ արուեստով, զուսպ ու լակոնիկ, բարձր ճաշակով է ներկայացուած Սամարուհին, քիչ տողերի մէջ անչափ շատ ասուած։ Մի փոքրիկ նորավէպ, մի տիեզերք աչք։ Փակ, չարտայայտած զգացումի մի անհունութիւն մի քանի էջի մէջ։

Բարձր սէրը հաւանաբար այն միակ մէծնոլորտն է որով մարդ կարող է արտայայտել հոգու ալխարհի բոլոր նրբութիւնները ու վեհութիւնները և հենց այդ պատճառով է որ հանճարեղ գործերը, սկսած Աւետարանից մինչև Քսաներորդ դարի մեծութիւնները, իրենց խորունկ ու վեհ մտքերը արտայայտում են մեծ սէրերի լոյսի մէջ։

Ցոգնած ու ծարաւ,
Ձրրհորին առջև,
Ցիսուս կանգ առաւ։
. . .
Իր դէմքին վրայ՝ խռնչէնիք ու փոշի,
Եւ աչքերուն մէջ՝ տակաւ հեռացող
Ու ամիսրիզոն խորունկ երկիւնքներ։
Կը ցայի կրնոջ,
Եւ կը խրնդրէ ջուր։
Ջայնը ցիսուսին, լրջին մէջ իսկոյ
Աստղի մը ցրման,
Փրշուր առ փրշուր կ'իջնէ անկէ ցերս,
Ծրնցով հազար ալիքներ լոյսի,
Եւ շրրջանակներ՝
Մրքին, ամորոշ ըզգացումներու։
Կը սահի, յուշիկ, դոյլն ամոր ձեռքէն։

Բիբլ ու վայրագ մէջավայրում կինն ամէնուրեք ապատում է կատարեալին, մեծ ու մաքուր սէրոյ. բայց կեանքը նրան չարունակ մխրճում է տիղմի մէջ։ Կանանց կերպարները բոլորը վեհ են, գեղեցիկ և ենթակայ սիրոյ ապուշածային լոյսին, որին հանդիպելով՝ նրանց մէջ արթնանում են ամենաբարձր ու գեղեցիկ զգացումները, ամենանախորոշնկ, անպիղծ սէրը։

— Դուն քանի՞ ամգամ,
Մարդոց սիրտն ի վար,
Դոյլ արձակեցիր, ո՛վ Սամարուհի,
Եւ ամէն ամգամ, ջուրի փոխարէն,

digitised by A.R.A.R.@

Գլուխը ափ մը տխմ՝ :
Կինը չի գիտեր թէ լոյսն այդ ձայնին,
Ինչո՛ւ մուրերուն մէջ իր կը սուզուի :
. . .
Իր ցայուածքին մէջ կը վարժատրուին,
Անդարձ, խորտակուած տարիներն քոլոր՝
Սամարուհիին.
Որուն սրտին մէջ, կ'իրանայ յանկարծ,
Երկինքներու չափ խոր ու անանուն,
Կայլակը ոսկի, կայլակը կըրակ,
Երազն անուարտ, բայց միշտ անյագուրդ,
Եւ միշտ վըրիպած,
Ըզգացումներէն ամենէն մեծին :
— Մարգարէ մը դուն կը թըւիս ինծի,
Ո՛վ ստարեկան.
Եւ հու խօսքերուդ հայելիին մէջ,
Կը մեռնին դարեր, կ'ապրի ապագան :

Ապա արուում է խմաստալից զրոյցը սիրոյ մեծութեան, մարդու բնութեան դէղեցկութիւններէ, աստուածայորդ սիրոյ արարիչ ուժէ մասին.

Իրմո՛վ կը խօսին աստղերն աստղերու,
Երկինքը՝ երկրին.
Ի՛ր շողերուն մէջ կը բանան թերթեր՝
Ծաղիկն, ու հոգին :
Իրի՛ն կը յառին ցայուածքը մանկան,
Աչերը կրնոջ
. . . Սիրտը մայրերուն :

Եւ փչրուում է կնոջ մէջ ամրողջ անցեալը, կործանուում է ու նորէն լսուեզուում աշխարհը.

Հեռացող ազուր այդ Գալիլիացին,
Իր ոսկի դոյլով,
Առած էր իրմէն ինչ որ ինք ունէր :

Եւ երբ մի անցորդ նոյն չրհորի մօտ գուժեց Սամարուհուն երիտասարդ Գալիլիացու խաչուած մեռնելու մասին՝

Կանխիք դոյլին, մէկէն, դարձաւ բար,
Եւ մընաց կախուած՝ ջուրերուն վերև :

Սալամէն — *կոչուող ծաւալուն պոէմից մեր հոգին է խուժում անսովոր դաժանութիւններով ու դեղեցկութիւններով ալեկոծուած մի աշխարհ, ուր խրախճանք է ու մահ, ուր օդը համակուած է տապալանքներով ահեղազոյն :*

Մի կողմից անիծակուռ փչերով անապատ քարակոճակ մարդարէն իր ահեղի անէծքներով՝ ենդուզք խակ էր մարմին հագած, հորիզոնները հաբուածող : Միւս կողմից ձիւներէ պէս հալլող Սալոմէն՝ փրփուրի դեղեցկութեամբ, որ փախչում է իր ճակատագրից և չդիտէ ի՛նչ է որոնում.

Գետափին մօտ՝ շուշան մինգպէս՝
Աւազներու պիտակ քրքոջ. . .

Բայց ահա յօշոտուող հոգով լսում է մարգարէին՝

— Վա՜յ ապջրկաճ,
Մարմինն որուն, գինն է արեան
Իր հայրիկին· · ·»:

Հայրը, մայրը, ողջ հրջապտոյտը, որոնց պատճառով նա պատժուած է ամենադաժան կերպով: Եւ ահա մայրը.

— Շուներն ուտեն պիտի անոր
Մարմինը գարշ,
Որ ամուսինն իր առաջին,
Շրջբ-թայապիրկ՝ դըրկեց Հրոմվմ,
Ու պառկեցաւ ուրիշին ծոց:
· · ·
Որ անփակաճ ապջինն անա
Կը յարդարէ
Սիրահարին իր մահիճին»:

Մինա կողմից աչքին երևում է չղթայապիրկ մարդուն ատնող ամբոխը.

Սառ կըտրեցաւ արիւնն իր մէջ·
Փըրթաւ, ըսես, ծաւնկերն իր խեղճ·
— Մոդէզն անգամ գարշանօք կը զգայ
Գառնիկ մօրմէդ·
Դո՛ւրս հլիր, դո՛ւրս»:

Սալոմէն արդէն դրսում էր, բանտի դուռը փակուած էր և նա արդէն ոչինչ չէր լսում, չէր զգում. միայն հոգու խորքում տեսլութեան ու զգուանքի կրակն էր ծաւալւում, միայն շուրթերն էին արիւնոտուում առանձների կրծոտուածից, մարմինն էր ցնցւում և խեղդւում էր վրէժի ծարաւից:

Այնուհետև տեսնում ենք գոհարների մէջ հեզեղուած Հերովդիային, թագաւորին, պալատի խրախճանքն ու Սալոմէի խենթացած պարը, մարդապէի կտրած գլուխը բաց աչքերով սկուտեղի վրայ, կատաղած վայրագ ամբոխին և գեղեցիկ վարդապետի դատաստանը:

Այսպէս մի փոքր պոէմի մէջ կայ ժամանակի որքա՜ն խտացում, դէպքերի ու դէմքերի որպիսի՜ քազմազանութիւն, մեծ երևոյթների ընդհանրացումներ, ուսմունքներ, փիլիսոփայութիւն, պատմութիւն, մարդիկ. մարդիկ՝ ահաւոր ճակատագրերով, խորունկ խորքերով, ներքին նրբութիւններով, սիրոյ թրթիռներով, կենդանի, պատկերաւոր ու հաղորդական: Եւ ամբողջի ֆոնի վրայ ճիւնաշուշան Սալոմէն՝ իր ներսի կրակներով, իր ահռելի վրիժառութեամբ:

Կարդում ես այս ուժեղ ու վառ գործը և ափսոսում, որ այսպիսի հեղինակը իր ամբողջ էութեամբ չի նուիրուում գրական կեանքին ու աշխարհին:

Ղեղոսի Լուտասը — *Մի իսկական ճերմակ ծաղիկ է այս ամէնի մէջ:*

Դեռատի գեղեցկուհուն քերել են վանք, մայրապետը տրտում նայել է նրան ու Ղեղոսի Լուտասս անունն է տուել, բայց Լուտասը չի դիմանում վանքի ամայի պատերին: Կեանքի յորդացող ուժը գուրս է նետում նրան: Աղջիկը խենթանում է սիրոյ, մտերմութեան կարօտից: Ու չէկ աւազներից փախչում է Լուտասը, փախչում է դէպի կեանք, դէպի մարդիկ:

digitised by A.R.A.R.@

Տարիներ ցետոյ երկար բանաստեղծութեան մէջ, մահացող կնոջ վերջին մտորումներն են անցած կեանքի, մարդու և բնութեան մասին, տրուած մի զարմանալի թեթև դառնութեամբ։

Ինչպէս տեսնում ենք, մեր Ասածոյ ծառայ բանաստեղծը անդրադարձել է կնոջը վերաբերող բոլոր հարցերին, ի հարկէ Սուրբ Գրքի սահմաններում միայն· բայց ի պատիւ բանաստեղծի պիտի խոստովանենք, որ կանանց կերպարներով տուել է նա սիրոյ գեղեցիկ զօրութեան, բարձր նուիրուածութեան աջանչելի օրինակներ։

* * *

Շարունակում ենք թերթել Ընտիր էջերը և բանաստեղծի տաղանդը գտնում ենք մի նոր ուժ ու փայլ ստացած, իր նոր շարքում, որը խորագրուած է՝ Անոնք որ չեն մեռնիր— «Ես եհովան եմ այս գիշեր», «Ես Ցուդան եմ այս գիշեր», «Ես Սողոմոնն եմ այս գիշեր» և մի չարք այլ գործեր։ Այստեղ ուշագրաւ են՝ «Տեսիլներ տրտում օրերէն» և «Անցորդը» բաժինները, որոնք հեղինակի ներքին աշխարհը չատ աւելի բացող ու ներկայացնող խոհական գործեր են, արժանի յատուկ ուսումնասիրութեան։

Վերոյիշեալ չորքերից ինձ համար առանձնապէս նշանակալից են՝ «Ես Արտաւազդն եմ այս գիշեր» բանաստեղծութիւնը և «Մուրբ Մեսրոպ» հրաշալի պոէմը։

Մի առանձին պրկուած հոգով, ջիղով ու ամրութեամբ է մշակուած Մասեաց լանջերի խորքում չղթայուած Հայոց Արտաւազդի լեգենդը, որի շղթաները կուում և ամրացնում են հազարաւոր գարբիններ՝ «Հազար ամէ մինչ հազար ամ»։ Իսկ ժողովուրդը սպասում է նրա գալստեան, սպասում է որ կրակի նա անէծքի չղթաները և գայ փրկի գերուած, աւերուած հայրենի երկիրը։ Ես կուռ ու կոփ պատկերներով գծագրում է երբեմնի չէնչող հայրենիքն ու բոլոր կործանումները, արիւն-աւերների ցնցող տեսարանները։ Լաւագոյնը այս պոէմների հիմքում եղած ամուր հաւատքն է և անբեկանելի լաւատեսութիւնը։

Մենք կը սպասենք Ձու մեծ կոչին
Կործանելու աշխարհն այս պիղծ,
Ու կանգնելու արդարութիւնը Ձու փառքիդ···
· · ·
Կտրէ՛ շղթադ,
Նետուէ՛ վըրան աստուածագիղ
Ձու ընծոյգին,
Թափն արծակէ՛ խոյաձիւներուդ լեռնանուէր,
Ազատութեան ու խաղութեան· · ·
· · ·
Մեզ արհամար ըրէ կըրկին՝
Վըրան ամօյշ հայրենիքիդ։
Գեզ կը սպասեն մեռելները մեր դարերուն
Ու ողջերը մեռելներուն։

Հասկանալի է թէ խօսքը հայրենիքի մասին է։ Սակայն հեղինակը չատ ժամանակակից մտածող է և իր այսօրուայ խորհուրդն է տալիս աշխարհով մէկ ափռուած իր վտարանդի ժողովրդի համար։

Դարն է անցեր աստուածներուն,
Ասպետներուն·
Փառք, հայրենիք ողողակող իմ ժողովուրդ,
Որ հէքիաթէն կը պահանջես

digitised by A.R.A.R.@

Երիվարնիր ու աբեռներ.
կը հաւատան մեռելներուն:
. . .
Այս ճամի՛ դար բանր եմ հո...
Ամէն Հայու հոգիին մէջ
Արտաւազդ մը պէտք է կանգնի:
կը խորտակիմ հէքիաթի իմ մեծ
Որ կը յանձնէ ազատութիւնը մեր ցեղին
Մէկ հերոսին.
Դարն է հիմա հազարներու:
. . .
Բազուկ բազկի, և սիրտ ի սիրտ
Մենի՛ կը չինենի՛ հէքիաթը ձոր:

Ամենախորունկ, ոգեչաղախ գործերից մէկն է «Սուրբ Մեսրոպ» պոէմը, որը համակ ազօքք է, գորովանք է ու երախտիքի լոյս է, կանչ է ու կոթող մեծ զգացումի:

Մեր գոյութեան ամենամեծ իրագործութեան չափազրանքն է: Մեր գպրութեան հիմնադիր հօր կեանքի ու աշխատանքի լուսեղէն պատկերը:

Սա մեր գիր ու գրչի հիմնադրման օրհնանքն է ու վերակոչումը: Ընփրւոք աշխարհում նորից օտարանում է մայրենի լեզուն ու նուազում է ոգին հայրենի, և բանաստեղծը նորից օգնութեան է կանչում մեծ լուսաբարին:

Հոգեբուխ հիացումով, երախտիքով ու սրբից սուրբ պատկերումով ներկայացնում է բանաստեղծը երիտասարդ, խմաստուն ու հոգեխոով վարդապետի ուսանելը օտար ափերում, վերադարձը, երկրի ժողովրդի կեանքին խորքից ծանօթանալը ու մեծ հանճարի հոգու խոովքը անփոխան գիր ստեղծելու համար.

Տըմոյն լայնի տակ մոմերուն
Ծամածռակին,
Աչ կը թերթէր ցաւի ու խրոովմի
Մեր աշխարհին,
Որ իրեն հետ կուլար կաթ-կաթ,
Մազաղաթի էջերն ի վար. . .

Որպիսի՛ երախտիքով ու լոյսերում ծովացած սիրով է նկարագրում բանաստեղծը սրբազան ջանքերը, խոովքները, և տառերի գիւտի աւանդական ստեղծումը, նրա դերն ու նշանակութիւնը:

ՄԱՐՕ ՄԱՐԳԱՐԵԱՆ

(Շար. 2)

digitised by A.R.A.R.@